

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Հունիսի 16-ին, շաբաթ օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի, Փարիզի «Շառլ դը Գոլ—1» օդանավակայանից մեկնում է Մոսկվա:

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին եկել Տ. Գյուտ եպս. Նազգաշյանը, Փարիզի հայոց եկեղեցական վարչության անդամները, փարիզահայ ծանոթ ազգայիններ և բազմաթիվ հավատացյալներ:

Նորին Սրբությանը բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էր եկել նաև Ֆրանսիայում սովետական դեսպանատան ներկայացուցիչ պրն. Լևոն Գասպարյանը:

Շուրջ երեք ժամ տևող թռիչքից հետո օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի «Շերեմետևո—2» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը և Խաչիկ սրկ. Մարտիրոսյանը:

Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթելու համար օդանավակայան էին եկել նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի ներկայացուցիչ Վիկտոր Վոլոդինը և Էդվարդ Գալստյանը:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 17-ին, կիրակի: «Սկիզբն Յարութեան Կիւրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին»:

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Եկեղեցին լեցուն էր բազմաթիվ հայ հավատացյալներով: Ս. պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը և պատմում տպավորություններ Հարավային Ամերիկա կատարած հովվապետական Իր ուղևորության մասին:

Հունիսի 18-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Վլադիմիր Կուրոյեդովին:

Ընդունելությունն անցնում է ջերմ մթնոլորտում: